Արձանագրություն N 3

ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան *21.07.2021թ, ժ 17:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղուկասյան - Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Մկրտչյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի գլխ. մասնագետ

Լ. Խալաֆյան – Սևանի համայնքապետարանի աշխատակազմի մասնագետ

Է. Ղազարյան – Սևանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական գործառույթների համակարգող

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Սևանի համայնքապետարան աշխատակազմի գլխ. մասնագետ

ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթովի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակից "Ճան Շին" ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունների ուղղման հնարավորություն տալու մասին

---

1. *Ընդունել ի գիտություն, որ՝*

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հրավիրել է հանձնաժողովի նիստ վերոհիշյալ օրակարգով քանի որ, հանձնաժողովի անդամների ուշադրությունից դուրս է մնացել "Ճան Շին" ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հրավերի պահանջների նկատմամբ տեղ գտած անհամապատասխանություններ: Հայտում ներառված ծավալաթերթ-նախահաշվում սխալ են հաշվարկված հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված կշիռները՝ տոկոսային արտահայտմամբ, և աշխատանքների նախահաշվային բաժիններից մեկի հանրագումարը: Քանի որ հանձնաժողովի կողմից դեռևս չի իրականացվել էլեկտրոնային գնահատումը և տեղի չի ունեցել գների իջեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները, ուստի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներին համապատասխան հնարավորություն տալ "Ճան Շին" ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2021թ. հունիսի 22-ը, ժամը 18:00-ն ուղղելու ներկայացված հայտում տեղ գտած անհամապատասխանությունները, հակառակ դեպքում հայտը գնահատել անբավարար:

Հանձնաժողովը որոշեց.

1. Չեղարկել ԳՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-2021/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021 թ. տեղի ունեցած թիվ 2 նիստի կողմից ընդունած բոլոր որոշումները և դրանց անդրադառնալ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստում, որը կկայանա 2021թ. հուլիսի 23-ին ժամը 10:00-ին, ք. Սևան, նաիրյան, 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. *ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներին համապատասխան հնարավորություն տալ "Ճան Շին" ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2021թ. հունիսի 22-ը, ժամը 18:00-ն ուղղելու ներկայացված հայտում տեղ գտած անհամապատասխանությունները, հակառակ դեպքում հայտը գնահատել անբավարար:*

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Հանձնաժողովի Նախագահ՝ _____ *Ա. Ղուկասյան*

Անդամներ՝ _____ *Մ. Մկրտչյան*

_____ *Լ. Խալաֆյան*

_____ *Է. Ղազարյան*

Քարտուղար՝ _____ *Ա. Ավետիսյան*